ЮКЖД

Локомотив вашего бизнеса • Ձեր բիզնեսի լոկոմոտիվը

www.ukzhd.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ երկաթուղային

ՀԿԵ ՓԲԸ-ի ամսաթերթ

1 (48)

Железнодорожник Армении

ՅՈՒՆՎԱՐ, 2016

С Новым годом!

Уважаемые дамы и господа, дорогое коллеги!

Сердечно поздравляю всех вас с наступающим Новым годом и Святым Рождеством! Уже через несколько дней мы вместе с нашими семьями, с друзьями, родными и близкими поднимем бокалы, провожая старый и приветствуя Новый год.

Все мы традиционно связываем с Новым годом новые ожидания, строим планы на будущее, надеемся на положительные изменения и приятные, радостные события.

Прошедший год для железной дороги Армении был сложным и напряженным, перед нами стояло множество вызовов. Железной дороге пришлось работать на негативном фоне спада перевозок. Но в то же время год был полон важных событий: продолжилась работа по расширению и совершенствованию возможностей крупных производственных комплексов ЗАО «ЮКЖД», в эксплуатацию был сдан первый тепловоз, отремонтированный в Армении силами наших сотрудников, после коренной реконструкции и восстановления была задействована тяговая подстанция «Памбак».

Насколько успешным будет для ЮКЖД следующий, 2016 год, зависит только от нас, от нашей упорной работы.

Уважаемые коллеги!

Искренне желаю вам радости и счастья в Новом году! Пусть этот год станет для нас временем достижений и новых свершений, успехов, благополучия и процветания.

С уважением,
генеральный директор ЗАО «ЮКЖД» Сергей Валько

Большая группа железнодорожников награждена за успешную работу в 2015 году

Генеральный директор ЗАО «Южно-Кавказская железная дорога» Сергей Валько 28 декабря на традиционной итоговой встрече с коллективом компании наградил почетными и благодарственными грамотами большую группу железнодорожников.

Руководитель компании вручил почетные грамоты пяти сотрудникам ЮКЖД за высокие производственные показатели, добросовестное и качественное выполнение должностных обязанностей. Благодарности были объявлены 10-ти специалистам, 55 сотрудников были премированы.

Почетные звания предприятий эффективных технологий и эстетики были присвоены Гюмрийскому производственному участку Гюмрийского вагонного депо Дирекции подвижного состава и подстанции «Каракерт» Предприятия электрификации и энергоснабжения.

На ЮКЖД подвело итоги работы в 2015 году

Генеральный директор ЗАО «Южно-Кавказская железная дорога» Сергей Валько на состоявшемся 28 декабря селекторном совещании подвел итоги работы компании в 2015 году.

По словам руководителя компании, железной дороге пришлось работать в непростых условиях падения объемов перевозок, обострения конкурентной борьбы с автотранспортом.

Как отметил Сергей Валько, несмотря на столь сложные условия, был улучшен ряд качественных показателей работы компании, таких, как, в частности, статнагрузка (рост на 1,9%), среднесуточный пробег (рост на 3,6%) и производительность (рост на 0,2%) локомотива. Также в отчетный период удалось сократить эксплуатационный парк на 11,8% до 7,5 единиц, увеличить участковую и техническую скорости соответственно до 33,9 км/ч и 39,5 км/ч.

Подчеркнув важность обеспечения безопасности движения поездов, руководитель компании среди положительных факторов назвал почти двукратное сокращение числа запретительных мер, а также снижение количества отказов на 17%.

Генеральный директор ЗАО «ЮКЖД» отметил, что в 2015 году удалось существенно улучшить график следования поездов, доведя его выполнение до 99,1%, снизив количество задержек поездов на 32%.

«Несмотря на достигнутые успехи, основная наша задача – свести к минимуму задержки поездов», - сказал Сергей Валько.

Отдельно генеральный директор ЮКЖД остановился на вопросе оздоровления путевого хозяйства. В частности, в 2015 году было капитально отремонтировано 18,4 км пути, был проведен усиленный средний ремонт на 16 км, планово-предупредительная выправка пути прошла на 103 км. Кроме того, на участке Раздан-Дилижан было уложено 2,5 тыс. шпал, проведен ремонт 12 единиц специального и самоходного подвижного состава.

Балловая оценка пути в 2015 году была улучшена на 5 баллов по сравнению с запланированным показателем и составила 94 единицы. Генеральный директор ЮКЖД констатировал почти двукратное сокращение числа километров, имеющих неудовлетворительную оценку.

Среди основных достижений 2015 года руководитель компании назвал ввод в эксплуатацию после коренной реконструкции и восстановления тяговой подстанции «Памбак», позволивший обеспечить стабильную работу на данном участке и предупредить выход из строя рельсового хозяйства, освоение в Ереванском вагонно-локомотивном депо ремонта тепловозов в объеме ТР-3.

Вместе с тем Сергей Валько напомнил, что из-за прослеживавшейся с начала года тенденции спада объемов перевозок компанией были задействованы проекты по ресурсосбережению и антикризисные программы.

Среди главных задач, стоящих перед железной дорогой в 2016 году, генеральный директор ЗАО «ЮКЖД» назвал обеспечение безубыточности деятельности, совершенствование системы бюджетного управления, повышение уровня безопасности движения поездов, выполнение инвестиционных обязательств.

«Хочу поблагодарить всех вас за работу в 2015 году, который был для нас достаточно сложным. 2016 год будет для нас непростым годом. Желаю нам плодотворной работы и успехов в решении поставленных перед нами задач», - сказал Сергей Валько.

Создан Союз профессиональных организаций работников Южно-Кавказской железной дороги

22 декабря на общем учредительном съезде было принято решение о создании нового Союза профессиональных организаций работников ЗАО «Южно-Кавказская железная дорога». Решение было принято единогласно 85 делегатами учредительного съезда, которые представляли 23 профсоюзные организации, действующие на ЮКЖД.

Делегатов приветствовал генеральный директор ЗАО «ЮКЖД» Сергей Валько, отметивший, что настало время для коренных перемен в жизни коллектива.

«Сегодня важный момент в жизни коллектива железной дороги. Сегодня вы решите, за кого проголосовать, кому доверить ведение дел в социальной сфере. Важно, чтобы работа нового объединенного профсоюза коренным образом отличалась от работы предшественника», - подчеркнул Сергей Валько.

Во время съезда был утвержден основополагающий документ нового Союза профессиональных организаций работников ЮКЖД – Устав, согласно которому будут регулироваться основные принципы и механизмы деятельности новой организации, порядок вступления и прекращения членства в профсоюзе, взаимоотношения с работодателем. Именно на основе Устава новый профсоюз будет осуществлять защиту прав и интересов железнодорожников, контролировать соблюдение трудового законодательства, обеспечение здоровых и безопасных условий труда со стороны работодателя.

На альтернативной основе состоялись выборы председателя нового Союза. Были предложены 2 кандидатуры, путем открытого голосования большинством голосов была избрана неосвобожденный председатель профсоюза управления ЮКЖД Альбина Мартиросян.

Также были сформированы исполнительные органы нового Союза: совет, в который вошли 35 человек, президиум в составе 9 делегатов, а также ревизионная комиссия, состоящая из 5 членов.

На ЮКЖД подвели итоги работы в январе-ноябре

Генеральный директор ЗАО «Южно-Кавказская железная дорога» Сергей Валько на состоявшемся 4 декабря селекторном совещании подвел итоги работы компании в январе-ноябре 2015 года.

Как отметил С. Валько, в настоящее время продолжает прослеживаться отрицательная динамика объемов перевозок, которая наблюдается с начала года.

Вместе с тем гендиректор ЮКЖД констатировал определенное улучшение ряда качественных показателей работы компании, таких, как, в частности, увеличение статнагрузки на 1,5%, сокращение срока простоя вагона под одной грузовой операцией на 7,1% до 21 часа, рост среднесуточного пробега локомотива на 5%, сокращение парка эксплуатируемых локомотивов с 8,3 до 6,6 единиц, увеличение участковой скорости до 34 км/час.

Особо генеральный директор ЗАО «ЮКЖД» остановился на вопросах безопасности на железной дороге, отметив, что в январе-ноябре 2015 года балловая оценка пути была улучшена на 8 баллов и составила 88 единиц.

«Это очень хороший результат, которого удалось добиться благодаря работе механизированной дистанции пути, путевой машинной станции и дистанций пути», - отметил С. Валько.

При этом гендиректор констатировал сокращение на 47%, по сравнению с аналогичным периодом прошлого года, числа неудовлетворительных километров.

«Это хороший показатель и наша задача состоит в сохранении динамики при вхождении в зиму»,- заявил С. Валько.

Среди основных задач, стоящих перед железной дорогой, которые должны быть реализованы в декабре, генеральный директор ЗАО «ЮКЖД» назвал привлечение на железную дорогу дополнительных объемов перевозок, минимизацию расходов и получение дополнительных доходов, повсеместное внедрение режима экономии.

«Повторяю: наша задача - сохранить коллектив ЮКЖД. Мы знаем, какие методы нам необходимы для этого», - подчеркнул Сергей Валько.

Կազմակերպվում են ամանորյա ուղևորություններ դեպի Վրաստան...

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ Ուղևորափոխադրումների տնօրինությունը ուղևորներին առաջարկում է Նոր Տարին և Սուրբ Ծնունդն անցկացնել Վրաստանում: Ընկերությունը 15 հոգանոց խմբերի համար կազմակերպում է եռօրյա և հնգօրյա ուղևորություններ Թբիլիսի, Բաքուրիանի և Բաթում:

Զբոսաշրջիկները կարող են հարմարավետ վագոններով ուղևորվել Վրաստան, որտեղ նրանց սպասում են 3 աստղանի հյուրանոցային համարներ, ամանորյա շոու-ծրագիր, ինչպես նաև լրացուցիչ էքսկուրսիաներ Թբիլիսիում, Մցխեթայում, Բորժոմում, Բաթումում և Քութաիսում:

Լրացուցիչ տեղեկություններին և տուրերի ծրագրերին կարող եք ծանոթանալ ՀԿԵ պաշտոնական էջի՝ www.ukzhd.am, «Ուղևորափոխադրումներ» բաժնում:

ՀԿԵ ՓԲԸ-ն աջակցում է Ոստիկանությանը հատուկ ուսումնական պոլիգոն ստեղծելու գործում

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն ՀՀ Ոստիկանության հետ համատեղ ստեղծում է հատուկ ստորաբաժանումների մարզումների համար նախատեսված ուսումնական պոլիգոն: 2 հազար քմ. տարածություն ունեցող պոլիգոնի ուսումնական հարթակը կահավորված է երկաթուղային գծերով, երկու տեսակի ուղևորատար վագոններով և երկհարկանի շինությամբ:

Շնորհիվ նոր ուսումնական պոլիգոնի՝ հայ ոստիկանները հնարավորություն են ստացել կատարելագործելու համակարգված մասնագիտական գործողությունները, ինչը թույլ կտա երաշխավորել հասարակության և քաղաքացիների անվտանգությունը:

Բոլոր աշխատանքները կատարվում են ՀԿԵ ՓԲԸ-ի ֆինանսական աջակցությամբ և Ընկերության մասնագետների ուժերով:

В службе безопасности ЮКЖД подвели итоги работы за 2015 год

25 декабря во время традиционного предновогоднего построения были подведены итоги работы службы безопасности ЗАО «Южно-Кавказская железная дорога». Сотрудников приветствовал и поздравил с успешным завершением года заместитель генерального директора ЗАО «ЮКЖД» по безопасности Армен Дарбинян.

«Этот год был напряженным и трудным, но вы хорошо поработали. Уверен, что вы готовы к службе, и следующий год будет для нас не менее успешным», - подчеркнул Армен Дарбинян.

Начальник Службы безопасности ЮКЖД Артур Алванд также отметил, что для структуры год был достаточно активным и успешным, добавив, что в 2016 году предстоит усовершенствовать работу и повысить уровень безопасности.

По словам Артура Алванда, особо напряженная работа ждет сотрудников СБ в новогодние и рождественские дни, и до 10 января будет введен усиленный режим службы. Также будет ужесточен контрольно-пропускной режим, контроль за трудовой дисциплиной, будут усилены проверки на объектах инфраструктуры железной дороги.

Во время построения благодарственными и почетными грамотами были награждены наиболее отличившиеся сотрудники. Части сотрудников были вручены подарки от имени профсоюза.

В течение всего года сотрудники службы безопасности ЮКЖД обеспечивали должный контроль и охрану объектов, осуществлялись надлежащие проверки, велись работы по обучению и повышению квалификации служащих. Среди основных нововведений и достижений уходящего года – оснащение новейшей системой видеоконтроля и видеонаблюдения территории Ереванского вагонно-локомотивного депо. И эта система уже дала ощутимые результаты: удалось обезвредить организованную группу, занимавшуюся хищениями цветного металла с территории депо. Трое участников группы были задержаны, и в настоящее время дело находится в суде.

Особое внимание со стороны руководства ЗАО «ЮКЖД» уделено проведению антитеррористических мероприятий: проводится постоянный инструктаж руководства и личного состава, а также непрерывный мониторинг оперативной ситуации на всех охраняемых объектах ЗАО «ЮКЖД». В данном вопросе СБ успешно взаимодействует с правоохранительными органами Республики Армения.

Следует отметить, что ЗАО «ЮКЖД» является одной из немногих коммерческих структур в Армении, проводящих подобную работу. В наличии СБ ЮКЖД – табельное оружие, спецсредства и техника, современные средства связи.

Հայաստանի տրանսպորտային ներուժի նոր հեռանկարները

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության նախաձեռնությամբ դեկտեմբերի 3-ին նախարարի առաջին տեղակալ Արթուր Առաքելյանը և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոն այցելեցին Երասխում գտնվող «Արմաշ» տերմինալը և ծանոթացան օբյեկտի տրանսպորտային և լոգիստիկ հնարավորություններին: Հյուրերին ուղեկցում էր «Մանանա գրեյն» և «Մանանա Սթոուն» ընկերությունների («Արմաշ» տերմինալի սեփականատերեր) տնօրեն Գուրգեն Նիկողոսյանը:

Հյուրերին ներկայացվեց բեռնաթափման, բեռների պահեստավորման և մշակման տեխնոլոգիական ողջ գործընթացը, պահեստների հնարավորություններն և պահպանման պայմանները:

Իրանի սահմանից 300 կմ հեռավորության վրա գտնվող և մինչև 15 հազար տոննա հացահատիկային բեռներ ու 500 կոնտեյներ պահպանման հնարավորություններ ունեցող այս տերմինալը մեծ ծավալի բեռների սպասարկման էական ներուժ ունի:

«Արմաշ»-ի մասնագետների կողմից մշակված բեռների տարբեր տեսակների սպասարկման նախագիծն ուղղված է ՀԿԵ-ի երկաթուղային ենթակառուցվածքն օգտագործելով Հայաստանի Հանրապերության՝ որպես տարանցիկ երկրի ներուժի զարգացմանը:

Անհրաժեշտ է նշել, որ տերմինալը կարող է աշխատել ինչպես բեռնափոխադրումների ուղիղ տարբերակով (բեռնաթափումը վագոններից՝ ավտոտրանսպորտ), այնպես էլ օգտագործելով պահեստները: «Արմաշը» կարող է սպասարկել տարբեր տեսակի բեռներ՝ հացահատիկեղեն, շինանյութ, քիմիական և վերամշակող արդյունաբերության արտադրանք և այլն:

Տերմինալի օգտագործումը բեռնափոխադրումների գործընթացում թույլ կտա էապես կրճատել մաքսային ձևակերպումների համար անհրաժեշտ ժամանակը: Բոլոր մաքսային գործընթացները կկատարվեն տերմինալում, բոլոր կազմակերպչական հարցերն արդեն լուծված են:

Անհրաժեշտ է նշել, որ ՀԿԵ-ն կուտակել է բեռնափոխադրումների հարուստ և հաջող փորձ: Այժմ Ընկերությունը բեռնափոխարդրումներ է իրականացնում աշխարհի 75 երկիր:

Ընկերությունը արդյունավետ համագործակցում է նաև Վրաստանի երկաթուղիների հետ: 2009 թվականից շաբաթական 2 անգամ աշխատում է Կարմիր Բլուր-Փոթի-Կարմիր Բլուր արագացված կոնտեյներային գնացքը: 2008 թվականի համեմատ՝ ՀԿԵ-ի կոնտեյներային բեռնափոխադրումների ծավալն աճեց 80%-ով:

Ընկերությունում համոզված են, որ «Արմաշ» տերմինալի հնարավորությունների օգտագործմամբ Հայաստանի տարածքով բեռնափոխադրումների իրականացմանն ուղղված ներկայացվող նախագիծը կլինի արդյունավետ և թույլ կտա ապահովել երկաթուղային բեռնափոխադրումների ծավալների աճն ու Հայաստանի տարանցիկ ներուժի զարգացումը:



ՀԿԵ ՓԲԸ-ն արժանացել է «Ոսկե մրցանակի»

Երևանում կայացած ԱՊՀ անդամ երկրների ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման Միջպետական խորհրդի 48-րդ նիստի շրջանակներում «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն ստանդարտացման աշխատաքներին ակտիվ մասնակցության համար արժանացել է հատուկ «Ոսկե մրցանակի»:

Մրցանակը ՀԿԵ ՓԲԸ գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոյին շնորհեց ՌԴ տեխնիկական կարգավորման և չափագիտության դաշնային գործակալության ղեկավար Ալեքսեյ Աբրամովը:

ՀԿԵ ՓԲԸ ղեկավարը շնորհակալություն հայտնեց Ընկերության գործունեությունը բարձր գնահատելու համար:

- Մեր աշխանաքում մենք ուղղորդվում ենք ընդունված չափանիշներով: Այսօր մենք հաջող համագործակցում ենք երկաթուղային տրանսպորտի համար տարբեր պահեստամասեր և ապրանքներ արտադրող հայկական մի շարք ընկերությունների հետ: Նման ընկերությունների թվում հարկ է նշել երկաթբետոնե կոճեր արտադրող «Բետոն» արտադրական կոոպերատիվը: Հայկական արտադրողներն այժմ մատակարարում են ԱՊՀ ստանդարտներին լիովին համապատասխանող արտադրանք, - նշեց Սերգեյ Վալկոն՝ ընդգծելով, որ Ընկերությունը զարգացնելու է համագործակցությունը հայաստանյան ձեռնարկությունների հետ:

Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման Միջպետական խորհուրդը ստեղծվել է 1992 թվականի մարտի 13-ին: Խորհուրդն ԻՍՈ-ի կողմից ճանաչվել է ստանդարտացման Եվրասիական տարածքային կազմակերպություն:

ՀԿԵ-ում կարևորում են չափագիտության և ստանդարտացման համակարգի զարգացումը: Ընկերությունում գործում է չափագիտության ապահովման համակարգի զարգացմանն ուղղված ծրագիր, կիրառվում են որակի ժամանակակից ստանդարտներ: ՀԿԵ-ում պարբերաբար կազմակերպվում են չափագիտական ապահովման համակարգի կատարելագործման հարցերին նվիրված քննարկումներ: Վերջինը կայացավ սեպտեմբերի 3-ին և նվիրված էր Գյումրիի երկաթուղային հագույցի ձեռնարկություններում նման ստանդարտների կիրառմանը:

Իսկ 2015 թվականի մարտի 25-ին Երևանում կայացավ ՄՏԿ 524 «Երկաթուղային տրանսպորտ» ստանդարտացման հարցերով Միջպետական տեխնիկական կոմիտեի (ՄՏԿ 524) հերթական նիստը: Նիստի շրջանակներում քննարկվեցին 2014 թ. աշխատանքի արդյունքները և նպատակները 2015-ի համար, երկաթուղային տրանսպորտի ապահովության հարցերը, կայացավ հանդիպում Հայաստանի երկաթուղային ոլորտում աշխատող արտադրողների հետ:

Նիստի մասնակիցները ծանոթացան ՀԿԵ-ի աշխատանքին և ձեռքբերումներին, այցելեցին երկաթուղային ենթակառուցվածքի տարբեր օբյեկտներ, մասնավերապես Երկաթուղային ենթակառուցվածքի ախտորոշման ճանապարհային կենտրոն, Ուսուցման ճանապարհային կենտրոն:

ՌԴ դեսպանաան շնորհակալագիրը ՀԿԵ ՓԲԸ Հասարակայնության հետ կապերի բաժնին

Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանատունը դեկտեմբերի 14-ին շնորհակալագիր է հանձնել «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ Հասարակայնության հետ կապերի բաժնին՝ արհեստավարժության, պատասխանատվության և դեսպանատան, ռուսական կազմակերպությունների և ներկայացուցչությունների հետ արդյունավետ ինֆորմացիոն համագործակցության համար:

Посольство Российской Федерации
в
Республике Армения

В.АЛОЯНУ

БЛАГОДАРНОСТЬ

Посольство Российской Федерации в Республике Армения выражает благодарность начальнику отдела связей с общественностью, пресс-секретарю генерального директора ЗАО «ЮКЖД» Вардану АЛОЯНУ за профессионализм, ответственность и плодотворное информационное сотрудничество с Посольством, российскими организациями и представительствами в Армении, в том числе по освещению 70-летия Победы и вклада Армении в ВОВ.

ПОСОЛ И.ВОЛЫНКИН

14 декабря 2015 года

Շնորհակալագիրը ՀԿԵ ՓԲԸ Հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Վարդան Ալոյանին հանձնեց Հայաստանում ՌԴ Արտակարգ և Լիազոր դեսպան Իվան Վոլինկինը:

Ամփոփելով տարվա արդյունքները՝ դեսպանը նշեց, որ 2015-ի ընթացքում Հայաստանում Ռուսաստանի դեսպանատան, Գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի, ռուսական կազմակերպությունների և ներկայացուցչությունների ու ՀԼՄ-ների փոխազդեցությունը նոր մակարդակի է հասել: Վոլինկինի խոսքերով, դեսպանատունն իր կողմից փորձել է տեղեկատվական աշխատանքն ավելի բաց և թափանցիկ դարձնել:

Իվան Վոլինկինն ընդգծեց, որ իրենք բարձր են գնահատում այդ համագործակցությունը և հույս ունեն, որ չնայած տեղեկատվական պատերազմների բարդ շրջանի և ապատեղեկատվության մեծ հոսքի՝ հաջորդ տարի փոխգործակցությունը նոր մակարդակի կհասնի:

«Հատկապես ցանկանում եմ նշել անցած տարվա նշանակալի և հոբելյանական ամսաթվերը, որոնք միավորել են մեր ժողովուրդներին՝ Հայաստանի անդամակցությունը ԵՏՄ-ին, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը և Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակը»,- ասաց դեսպանը:

ՀԿԵ ՓԲԸ Հասարակայնության կապերի բաժնի հետ միասին շնորհակալագրեր ստացան մի շարք հայաստանյան ՀԼՄ-ների, ռուսական կազմակերպությունների և ընկերությունների ներկայացուցիչները:

Победителем корпоративного чемпионата ЮКЖД по футболу стала команда ПДМ Санаин

Победителем традиционного ежегодного корпоративного чемпионата ЗАО «Южно-Кавказская железная дорога» по футболу стала команда ПДМ Санаин. Второе место заняла команда Предприятия электрификации и энергоснабжения, третье – ПЧ Севан.

Чемпионат проводится по инициативе Совета молодежи. В этом году в мероприятии приняли участие 15 футбольных команд, представлявших различные предприятия и структурные подразделения компании.

В матчах за футбольный кубок силами померялись команды станции Масис ЛСО «Ереван» и Дирекции по перевозкам, Информационно-вычислительного центра и Восстановительных и противопожарных поездов, Дирекции пассажирских перевозок и ПДМ Санаин, Дирекции материально-технологического обеспечения и Предприятия электрификации и энергоснабжения, ПЧ Ванадзор и Дорожного центра диагностики инфраструктуры, ПЧ Севан и Службы безопасности, Предприятия автоматики, телемеханики и связи и ПЧ-Ереван, а также Дирекции подвижного состава.

Подобные соревнования проводятся на ЮКЖД регулярно с целью развития корпоративной культуры и ценностей компании. В рамках реализации молодежной политики Советом молодежи проводятся спортивные и интеллектуальные игры, в частности, ставший также традиционным ежегодный чемпионат по игре «Что? Где? Когда?».

Команда Дирекции подвижного состава – чемпион ЮКЖД по игре «Что? Где? Когда?»

25 декабря состоялся традиционный корпоративный чемпионат ЗАО «Южно-Кавказская железная дорога» по интеллектуальной игре «Что? Где? Когда?», организованный по инициативе Совета молодежи компании. Участников чемпионата приветствовали первый заместитель генерального директора ЮКЖД Олег Шаталов, начальник отдела технической подготовки Армен Тамирян и председатель Совета молодежи Сумбат Сумбатян.

Участие в чемпионате приняли 9 команд, представлявших различные дирекции, службы, структурные подразделения и предприятия ЮКЖД. Победу одержала команда Дирекции подвижного состава, второе место заняла сборная команда Отдела международных связей и взаимодействия с административными органами и Службы имущества, третье – команда Информационно-вычислительного центра.

Чемпионат был организован Советом молодежи компании с целью стимулирования активности, формирования в среде молодежи ЮКЖД корпоративного духа и ценностей, содействия развитию личностного и профессионального потенциала молодых сотрудников.

Ամանորը գնացքում

Ամանորն այն եզակի տոներից է, որ բոլորը ջանում են նշել ընտանիքի հետ միասին: Եվ ամեն տարի, չնայաց շատերը փորձում են ինչ-որ հետաքրքիր բան մտածել Նոր տարին դիմավորել յուրահատուկ ձևով, մեր հայրենակիցների մեծամասնությունը գերադասում է ավանդական տոնակատարությունները: Իսկ ավանդական հայկական Նոր տարին քաջ ծանոթ է բոլորիս՝ ակտիվ նախապատրաստական աշխատանք, աղցաններ, տոլմայի և խոզի բդի բույրը, «բլինչիկներ», իսկ հետո՝ շնորհավորանքներ և բարեմաղթանքներ հարազատների, բարեկամների և հարևանների կողմից:

Իսկ ինչպե՞ս կարելի է Ամանորը դարձնել անկրկնելի և հիշվող: Այլ երկրներում արդեն ձևավորվել է հսկա շարժում, որը միավորում է յուրօրինակ մտածելակերպ ունեցող մարդկանց, ովքեր փոխանակվում են Նոր տարին էքստրեմալ դիմավորելու իրենց փորձով: Ոմանք Ամանորը տոնում են ծովի հատակին, ոմանք՝ հակառակը, օդում, ոմանք գերադասում են լեռները:

Վերջին տարիներին աճում է գնացքներում Նոր տարին դիմավողների թիվը: Դրանցից մի մասը ստիպված են ընտանեկան այս տոնը անցկացնել ճանապարհին՝ գործնական ճամփորդություններում, իսկ ոմանք էլ այդ քայլին գնում են մտածված, ցանկանալով կոտրել կարծրատիպերը: Օրինակ՝ Ռուսաստանում ամեն տարի Ամանորը գնացքում դիմավորում է միջինը 50 հազար մարդ:

Այս առումով բացառություն չէ նաև Հայաստանը: Չնայած մեր հասարակությունը համարվում է ավանդապաշտ, մեզ մոտ նույնպես կան այնպիսի մարդիկ, ովքեր դիմավորում են Ամանորը գնացքում: Իսկ ինչպե՞ս են Նոր տարին տոնում մարդիկ, ովքեր դեկտեմբերի 31-ին կատարում են իրենց աշխատանքային պարտականությունները, գտնվում են աշխատավայրում, սպասարկում են գնացքի ուղևորներին: Նրանցից մեկն է Հարավկովկասյան երկաթուղու Երևան-Թբիլիսի-Երևան ուղևորատար գնացքի պետ Անդրանիկ Շահնազարյանը, ով 2003 թվականից ի վեր Ամանորը դիմավորում է իր աշխատակազմի հետ: Նա նշում է, որ սա էլ իր համար ընտանիք է, իրենք էլ իրենց ձևով են նշում՝ չմոռանալով աշխատանքային պարտականությունների մասին:

Ինչպես պատմում է գնացքի պետը, Ամանորի գիշերը ուղևորները հիմնականում օտարերկրացիներ են: Օրինակ՝ անցած տարի գնացքի ուղևորներից միայն չորսն էին Հայաստանից, իսկ մնացածները՝ Ճապոնիայից, Միացյալ Նահանգներից, Ռուսաստանի Դաշնությունից:

Այդ օրը գնացքի անձնակազմն ուղևորների համար տոնական տրամադրություն է ստեղծում, իսկ վագոններին տոնական շունչ են հաղորդում ամանորյա գեղեցիկ զարդարանքները: Գնացքի պետի խոսքով, ամանորյա գիշերը՝ ժամը 12-ից հետո ինքը ուղեկցորդների հետ անցնում է վագոններով և անհատապես շնորհավորում ու բարեմաղթանքներ հայտնում բոլոր ուղևորներին: Մենք հետաքրքրվեցինք, իսկ ի՞նչ լեզվով եք շնորհավորում օտարերկրյա զբոսաշրջիկներին: Ժպտալով պատասխանում է, որ գնացքի ողջ անձնակազմը լավ տիրապետում է ռուսերենին ու անգլերենին:

Ուղևորներն էլ իրենց հերթին են նշում Ամանորը՝ չմոռանալով շնորհավորել աշխատակիցներին: Նրանցից ոմանք նշում են իրենց ճամփորդախցիկներում, ոմանք՝ բուֆետ-վագոնում, իսկ ոմանք էլ հանգստանում են, որպեսզի գնան և թարմ ուժերով նշեն իրենց հարազատների հետ:

Այս տարի ՀԿԵ-ն ուղևորների համար նախատեսում է հաճելի անակնկալներ. բուֆետ-վագոնում կազմակերպել ֆուրշետ և սիմվոլիկ նվերներ:

Ի դեպ, գնացքի պետ Անդրանիկ Շահնազարյանը կրկին ապացուցեց, որ երկաթուղայինները բավականին ակտիվ մարդիկ են և նրանց հետաքրքրությունները չեն սահմանափակվում զուտ աշխատանքով: Պարզվում է՝ Անդրանիկ Շահնազարյանն իր գործը պատշաճ կերպով կատարելու հետ մեկտեղ զբաղվում է նաև նետաձգությամբ: Այժմ նա ՀՀ նետաձգության հավաքական թիմի երկրորդ մարզիչն է:

Մարիամ Ալեքյան

На вокзале Еревана открылась благотворительная выставка-продажа «Граница – наша крепость»

25 декабря на вокзале «Ереван» ЗАО «Южно-Кавказская железная дорога» открылась благотворительная выставка-продажа «Граница – наша крепость». На выставке представили свои работы более десятка художников, народных мастеров из Арцаха, приграничных общин Тавушской области, Ширакской области, а также сирийской армянской общины.

Мероприятие организовано при содействии ЗАО «ЮКЖД» Международной организацией традиционного искусства и фестивалей, Фонда «Гурген Меликян – многодетным семьям Кашатага».

Представленные на выставке-продаже работы разножанровые: картины, авторские игрушки и поделки, открытки ручной работы, гобелены, вышивки и даже выращенные в собственных парниках цветы и домашнее вино.

Целью мероприятия является привлечение внимания к творческой жизни в приграничных и отдаленных общинах.

Подобные выставки проводятся на Южно-Кавказской железной дороге регулярно. В частности, у компании есть опыт организации выставок работ и картин воспитанников детских домов. Проводятся и исторические выставки: в прошлом году с успехом прошла выставка «Участие армян в Отечественной войне 1812-1814 годов», а к 70-летию Победы на вокзале была организована выставка армянских архивных фотографий и плакатов времен Великой Отечественной войны.

Անսպասելի քամին անսպասելի օգնություն բերեց

Օրեր առաջ հանրապետությունում մոլեգնած փոթորիկը բարեբախտաբար մարդկային զոհեր չբերեց, սակայն հսկայական նյութական վնաս պատճառեց: Լոռու մարզի Ալավերդի քաղաքում հատկապես լրջորեն վնասվել էր բնակելի ֆոնդը:

Ալավերդու քաղաքապետ Կարեն Փարեմուզյանի հավաստմամբ միայն 52 բազմաբնակարան շենքի տանիք ու լուսամուտներ են վնասվել՝ չհաշված մասնավոր բնակարանային ֆոնդը, որ սոցիալական անապահով իրավիճակում առավել խոցելի էր և տասնամյակներ շարունակ չէր վերանորոգվել: Բարեբախտաբար ժամանակին կազմվեց համապատասխան հանձնաժողով և արագ գույքագրվեց ու հաշվառվեց համայնքին պատճառված վնասի չափը:

Քաղաքապետի խոսքով՝ միայն 4000 քառ. մետր տանիք է ավիրվել, իսկ վերահաս անձրևների վտանգը ստիպում է առաջնահերթորեն հենց դրանց վերանորոգումն ավարտել:

Աղետի հետևանքները վերացնելու համար, բացի կառավարության օժանդակությունից Ալավերդին նաև մասնավոր օժանդակություն է ստացել:

Կարեն Փարեմուզյանը առանձնահատուկ նշում է «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությանը, որ առաջարկել է ոչ միայն նյութական, այլև մասնագիտական օժանդակություն: Ըստ քաղաքապետի, ՀԿԵ ՓԲԸ գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոն աղետի հենց հաջորդ օրն անձամբ եկել է Ալավերդի՝ տեղում ծանոթանալու փոթորկի պատճառած վնասներին և քաղաքային իշխանությունների հետ անձամբ քննարկել օժանդակության ձևերն ու ծավալները:

Այսօրվա դրությամբ Ընկերությունը քաղաքային իշխանություններին տրամադրել է մոտ 680 քառ. մետր (340 հատ) ասբեստե և 500 քառ. մետր թիթեղյա շիֆեր: Բացի դրանից, ընկերության Սանահին կայարանի և երկաթուղային դեպոյի աշխատակիցներն ավելի քան մեկ շաբաթ կամավոր օգնել են աղետի հետևանքների վերացման աշխատանքներին:

Նրանց ուժերով կտրվել ու տեղափոխվել է 23 շրջված ծառ, ևս 9 ծառ, որոնք վտանգ են ներկայացնում քաղաքի ենթակառուցվածքներին և բնակչությանը, կհեռացվեն օրերս: Երկաթուղայինների օժանդակությունից առանձնապես շոյված են քաղաքացիները, որոնք ամեն տեղից օգնության ակնկալիք ունեին, բացի երկաթուղուց: Սակայն օրհասական պահերին օգնությունը գալիս է անակնկալ:

«Երբ փոթորիկն անցավ, ամեն մեկը մտածում էր իր կրած վնասների հետևանքների վերացման մասին: Արդեն պատրաստվում էինք ցելոֆան ու շիֆերներ ձարել, որ արագ տանիքները ծածկենք, թե չէ անձրևները կարող էին բազմապատկել վնասը: Բայց հենց հաջորդ օրն իմացանք, որ երկաթուղին օգնություն է բերել: Այդ մի հոգսից ազատվեցինք»,- պատմում է Ալավերդու բնակիչ Գևորգ Իսլամիդիսը:

Քաղաքի թիվ 3 մանկապարտեզի տնօրեն Անուշ Թամազյանը հիշում է, որ փոթորկի պահին մանկապարտեզում 26 երեխա կար, որոնց ծնողները ամեն րոպե անհանգստացած զանգահարում էին: Տնօրենի որոշմամբ երեխաները մնացին մանկապարտեզում այնքան ժամանակ, քանի դեռ արհավիրքը չէր դադարել, քանի որ ամենաապահով տեղն այդ պահին դա էր:

Ցավոք, տուժել է նաև մանկապարտեզի շենքը, որի տանիքի համար նույնպես երկաթուղին է շինանյութ տրամադրել:

Մեզ հետ զրույցի ժամանակ Անուշ Թամազյանը մի տեսակ ամոթխածությամբ հույս հայտնեց, որ երկաթուղին չի բավարարվի միայն տանիքի մասնակի նորոգմամբ: Եթե այն ամբողջությամբ նորոգվի, ապա հնարավոր է մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը կրկնապատկել: Չէ՞ որ այդ մանկապարտեզից օգտվում են հիմնականում երկաթուղայինների ընտանիքները:

Քաղաքապետը հատուկ կարևորում է երկաթուղու աջակցությունը, քանի որ մինչ այժմ քաղաքային իշխանությունների և երկաթուղու համագործակցությունը ցանկալի մակարդակի վրա չի եղել, այն դեպքում, երբ «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությունը Ալավերդում հսկայական տնտեսություն և ենթակառուցվածքներ ունի:

Մինչ այժմ միայն որոշակի մշակութային համատեղ ծրագրեր են իրականացվել, սակայն երկաթուղու նոր գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոյի հետ արդեն պայմանավորվածություն կա ընկերության արտադրական հզորություններն օգտագործել նաև քաղաքի կարիքների համար:

Կարեն Փարեմուզյանի խոսքով, նախատեսվում է երկաթուղայինների հետ միասին բարեկարգել բակային խաղահրապարակները, քաղաքի արտաքին ձևավորման, նստարանների պատրաստման և մանկական կարուսելների տեղադրման աշխատանքներ սկսել:

Քաղաքապետը հույս ունի, որ շուտով կվերականգնվի նաև տուրիստական գնացքը, որ տարիներ առաջ մայրաքաղաքից մեծ թվով զբոսաշրջիկներ էր բերում Ալավերդի: Քաղաքի բնակիչներն ու ղեկավարությունը համոզված են, որ երկաթուղին ամենադժվար պահերին իրենց կողքին է, իսկ այդ դեպքում ոչ մի աղետ ու արհավիրք սարսափելի չէ:

Ոչ ոք ապահովագրված չէ տարերային աղետներից: Միաժամանակ, քչերն են ի զորու աղետի հետևանքները վերացնել միայն սեփական ուժերով: Ալավերդու օրինակը հույս է ներշնչում, որ տարատեսակ աղետների հետևանքների վերացման գործում իրենց օգնությունը, «Հարավկովկասյան երկաթուղու» օրինակով, կբերեն նաև այլ ընկերություններ՝ հայկական, թե օտարերկրյա:

Բարեգործությունը յուրահատուկ է միայն ուժեղներին:

Էդուարդ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ,
«Հրապարակ»,
8 դեկտեմբերի, 2015 թ.

ԴԻՄԱՎՈՐԵՆՔ ԿԱՊԻԿԻ ՏԱՐԻՆ

2016-ը Հրե Կապիկի տարին է: Հրե կամ կարմիր Կապիկը բավականին ակտիվ, սակայն միևնույն ժամանակ անկանխատեսելի կենդանի է, և նրա կրակը հանդարտեցնելու համար պետք է մոռանալ Ամանորը դիմավորելու ավանդական դարձած մեթոդների մասին և շարժվել նրա կանոններով:

Ի՞նչ պետք է դնել Ամանորի սեղանին

Նոր տարին դիմավորելիս պետք է նաև մտածել, թե որ սննդատեսակներն են զարդարելու ամանորյա սեղանը: Քանի որ 2016-ը Կապիկի տարի է, բնականաբար, սեղանին պետք է լինի կապիկների ամենասիրելի միրգը՝ բանանը: Բացի դրանից, պարտադիր են նաև նարինջն ու էկզոտիկ ուտեստները: Այս տարի յուղալի սննդատեսակները նախընտրելի չեն, քանի որ կապիկները դյուրամարս սնունդ են սիրում:

Բացի այդ, քանի որ Հրե Կապիկի տարի է, սեղանի վրա պետք է գերիշխի կարմիրը: Հետևաբար, ուտեստներն ու սեղանը զարդարելիս նախապատվությունը տվեք կարմիր գույնին:

Ի՞նչ պետք է հագնել

Կապիկները սիրում են վառ գույներ, ուստի ձեր ամանորյա զգեստն ընտրելիս հարկավոր է նախապատվությունը տալ գույնզգույն հագուստներին: Նույնիսկ կարող եք գնել դիմակահանդեսային զգեստներ: Գույնը գույն, բայց չպետք է մոռանալ էլեգանտության եւ նրբաճաշակության մասին: Ամանորի գիշերը կարող եք նաև ոսկյա իրեր կամ թանկարժեք զարդեր կրել:

Ինչպես զարդարել տունը

Կապիկները քաղցրասեր են, այսինքն՝ ոչ միայն սեղանին է պետք քաղցրավենիք դնել, այլև տոնածառի մոտ և բոլոր սենյակներում: Բացի քաղցրավենիքից, տունը պետք է ամենուր զարդարված լինի գույնզգույն լույսերով, դրասանգներով և փայլերով, որոնք նույնպես դուր կգան Հրե Կապիկին: Կարելի է ասել՝ որքան վառ ու պայծառ լինի տան և սեղանի ձեւավորումը, այնքան ավելի առատ ու հաջողակ կլինի 2016-ը:

Իսկ հիմա ամենակարևորի մասին

Այս բոլոր պատրաստությունները ոչ մի արդյունք չեն ունենա, եթե Նոր տարին դիմավորեք տխուր և գորշ միջավայրում: 2016-ը պետք է սկսել ուրախ և բարձր տրամադրությամբ, երգերով ու պարերով և ջերմ ժպիտներով:

ՏՈՆ, ԱՌԱՆՑ ՇԱՏԱԿԵՐՈՒԹՅԱՆ

6 կանոն ամանորյա ընթրիքի համար

Որպեսզի ձմեռային արձակուրդներն «անվերջ շատակերության» և «անհաջող երկարատև հանգստյան օրերի» չվերածվեն, սննդաբաններն առաջարկում են ամանորյա կերուխումին այլ տեսանկյունից մոտենալ:

ԿԱՆՈՆ ԹԻՎ 1. Նախօրեին քաղցած չմնալ

Շատերը հավատացած են, որ դեկտեմբերի 31-ին՝ ողջ օրը հարկ է քաղցած մնալ, որ կեսգիշերին կարողանան ուտել սրտի ուզածի չափ: Արդյունքում, ոչ միայն շատ եք ուտում, այլև այդ աղցանա-մսա-խմիչքային խառնուրդը մարսողական համակարգի համար իսկական մղձավանջ է դառնում: Դրա համար էլ սննդակարգը պետք է սովորական, առօրեական լինի՝ նախաճաշ, ճաշ, հետճաշիկ, ընթրիք:

ԿԱՆՈՆ ԹԻՎ 2 Շատ մի՛ պատրաստեք

Այսօր լեփ-լեցուն մեծ ափսեով «Մայրաքաղաքային» աղցանով ոչ մեկին չես զարմացնի, իսկ ստամոքսի ու լյարդի համար այդ աղցանը երրորդ օրն արդեն վնասակար է: Ավելի հագեցած՝ թանձրահյութով, մայոնեզով համեմված ուտեստներն օգտագործելի են առավելագույնը մինչև երկրորդ օրը: Բացի դրանից, շատ պատրաստված ուտելիքները շատակերություն են հրահրում: Դե, թխվածքն արդեն մի քանի օրվա է, բայց դեն նետելն ափսոս է, ուստի ուտում եք, մի կտոր, երկու, երեք...

Ամանորյա կերուխումը պետք է ավարտվի առավելագույնը հունվարի 1-ի երեկոյան:

ԿԱՆՈՆ ԹԻՎ 3. Գլխավորը՝ մրգեր և ջուր

Ամանորյա տոնակատարությունն ինչպիսի մթերքի հետ էլ նույնականացվի, միևնույն է, իրականում գլխավորը պետք է լինեն սովորական խմելու ջուրը և միրգն ու բանջարեղենը: Ջուրը թող որ գազավորված չլինի: Մի կողմից, այն կլցնի ստամոքսն ու թույլ չի տա շատ ուտել, մյուս կողմից էլ, եթե սպիրտային խմիչքի ընդմիջումներին խմեք, ջուրը կօգնի նաև շատ չխմել: Բացի դրանից, ջուրն արագացնում է ճարպի այրումը և նպաստում օրգանիզմի մաքրմանը: Իսկ միրգն ու բանջարեղենը, որոնք խոշոր կտորներով պետք է կտրատել, կօգնեն հյուրերին մյուս ճաշատեսակներին սպասելու ժամանակը կրճատել:

ԿԱՆՈՆ ԹԻՎ 4. Կեսգիշերին՝ թեթև նախուտեստ

Տոնական ընթրիքը պետք է սկսել ոչ թե կեսգիշերին մոտ, այլ ձեզ համար սովորական ժամին՝ երեկոյան 7-8-ին, իսկ ժամը 12-ին սեղանին թողեք թեթև նախուտեստն ու աղանդերը: Այդ ժամին մարսողական օրգաններն «արդեն քնել են ուզում», բոլոր գործընթացները դանդաղում են, այդ թվում և փոխանակային գործընթացները:

ԿԱՆՈՆ ԹԻՎ 5 Ձանձրույթից մի՛ կերեք

Կեսգիշերին մոտ շատերն արդեն հոգնած են լինում, նույնիսկ՝ ձանձրացած: Բայց ավանդույթը պարտավորեցնում է սպասել տարեմուտն ավետող ժամացույցի զանգերին և բաժակ բարձրացնել «նոր երջանկության» համար: Եվ չքնելու համար ամեն ինչ անում եք՝ ափսեի մեջ նորից ուտելիք եք լցնում և ուտում, ուտում:

Իսկ մինչև կեսգիշեր ժամանակը կարճացնելու համար կօգնի «Կանոն թիվ 4-ը»: Եթե ձանձրանում եք, հեռացեք սեղանից, ուրիշ ինչ-որ բանով զբաղվեք կամ էլ քնեք: Առողջության համար դա շատ ավելի օգտակար է:

ԿԱՆՈՆ ԹԻՎ 6 Ժամանակավորապես մոռացեք բեռնաթափման օրերի մասին

Նոր տարվա առավոտյան անպայման նախաճաշեք: Եվ ցանկալի է մինչև ժամը 11-ը, ոչ ուշ: Եթե նույնիսկ նախօրեին շատ եք կերել, միևնույն է, մեկ անգամ շատ ուտելով չեք գիրանա: Երբ նորմալ սննդակարգին վերադառնաք, ամեն ինչ կկարգավորվի:

Դրա համար էլ բեռնաթափման օրեր կարելի է կազմակերպել հունվարի 3-ին կամ էլ 5-ին: Խիստ սննդակարգերը հակացուցված են մեր ֆիզիոլոգիային և քաղցած մնալու ամեն մի նոր որոշում իրականացնելուց հետո մետաբոլիզմը նվազում է և կիլոգրամները կրկին են կուտակվում:

Մի խոսքով, Նոր տարուց գոնե 1 շաբաթ առաջ հարկ է մոռանալ բոլոր տեսակի սննդակարգերի մասին: ■

Նորիկ Պետրոսյան. «Երկաթուղում միտի աշխատես ու լա՛վ միտի աշխատես»

Հաճախ ենք լսում օրինակ, այսպիսի արտահայտություն՝ այս մարդը հայերենի (կամ մեկ այլ բանի) գիտակ է: Իմ զրուցակցի մասին ես կասեի՝ երկաթուղու գիտակ, երկաթուղին տակից վրա սերտած, համակարգը մինչև ուղնուծուծը իմացող մարդ է: Զրուցակիցս Սպիտակ քաղաքի կայարանապետ Նորիկ Պետրոսյանն է:

Այն ե՞րբ էր՝ գնացքի սուլոցն ականջն ընկավ ու շարժեց մանկական հետաքրքրությունը: Մի մատ երեխա էր, շոգեքարշի մանևրները նայելու համար խելքն իրենը չէր: Ընկերների հետ գնում մեքենավարներին խնդրում էին, որ թույլ տան գնացք մտնել: Հասուն պատանի էր, այդ սերն էլի կար, ու այդ սերն էլ նրան տարավ երկաթուղու տեխնիկում: Մինչև փոխադրումների կառավարման մասնագետ դառնալը արդեն երկաթուղում էր, որպես բեռներ ընդունող-հանձնող:

Ակտիվ, եռանդուն մարդ էր և այդպես էլ դրսևորեց իրեն աշխատանքի մեջ. ծառայողական պարտականությունների բառիս բուն իմաստով անթերի կատարում: Եվ 20-22 տարեկան երիտասարդի կենսագրության մեջ պարբերաբար առաջխաղացումը սովորական դարձավ. ազդանշանավար, կայարանի հերթապահ, կայարանապետի տեղակալ և վերջապես՝ կայարանապետ: Այս վերջին պոստում Նորիկ Պետրոսյանի նշանակումը տխուր պատմություն ունի. 1988 թվական, դեկտեմբերի 7, Սպիտակ. ավերված քաղաք: Ավերածություններն ու կորուստները՝ մարդկային, թե նյութական, քիչ չէին նաև երկաթուղում: Էլեկտրականություն չկար, ողջ ազդանշանային համակարգը խաթարված էր, ստիպված էին աշխատել ձեռքի կառավարմամբ: Երկաթուղայինները լա՛վ գիտեին դրա բարդությունը: Ավելի ծանր էր վիճակը մարդկային կորուստների առումով. Սպիտակի կայարանի աշխատողների գրեթե 80 տոկոսը զոհվել էին կամ վիրավոր էին: Նրանց թվում էր կայարանապետը՝ Արշալույս Ասատրյանը, որ բուժվել-ապաքինվելուց հետո էլ չկարողացավ հարազատների կորուստից ուշքի գալ և այլևս չվերադարձավ աշխատանքի: Եվ այդ ժամանակ էլ կայարանապետի պաշտոնում նրան փոխարինող Նորիկ Պետրոսյանը նշանակվեց կայարանապատ:

28-ամյա երիտասարդի համար եկավ աշխատանքի էլ ավելի ծանրաբեռնված, էլ ավելի լարված շրջան: Պաշտոնս ո՞րն է՝ գործ կա՞ր, որին ձեռք չգցեր: Համակարգի աշխատանքի կազմակերպման բոլոր գործընթացներին տիրապետող, բոլոր օղակներում փորձ ու հմտություն ձեռք բերած նորանշանակ կայարանապետից պահանջվում էր գործի դնել իր գիտելիքներն ու կարողությունները՝ վերականգնելու երկաթուղու խաթարված աշխատանքը. երկաթուղու, որ ավերված քաղաքն աշխարհի հետ կապող միակ միջոցն էր, անօթևան մնացած, հացի ու ծածկի սպասող հազարավոր մարդկանց փրկությունը: Կոլեկտիվը՝ ով կար, տքնեցին-ճգնեցին, մինչև օգնության կգային ռուս երկաթուղայինները: «Առանց նրանց օգնության անհնար կլիներ կազմակերպել մեր կայարանի աշխատանքը»,-երախտագիտությամբ ասում է Նորիկ Պետրոսյանը: Հանաք բան չէր՝ Սպիտակի կայարանում օրական 120-130 վագոն էր դատարկվում: Ամենօրյա մեծածավալ աշխատանքներին զուգահեռ ընթանում էին կայարանի վերականգնման աշխատանքներ:

Երկաթուղու նորոգմանը մեծ ուշադրություն էր դարձվում: Արդեն 1998-ին տնակային աշխատասենյակներին փոխարինելու եկավ կայարանի նոր շենքը: 2008-ին, երբ հայկական երկաթուղին անցավ հարավկովկասյան երկաթուղու տնօրինությանը, համակարգի բարեփոխումներն ավելի ակնառու դարձան. գծային տնտեսությունը՝ շուրջ 20 կմ, ամբողջովին նորոգվեց, ներդրվեց համակարգչային կառավարման համակարգ՝ միակը հայաստանյան երկաթուղում, որի կիրառմամբ ուղղակի բացառվում է գնացքների սխալ կառավարումը, իսկ դա նշանակում է երթևեկության հարյուր տոկոսանոց անվտանգություն:

Նորիկ Պետրոսյանն այս ամենի մասին խոսում է անթաքույց հպարտությամբ ու հրձվանքով: Եվ մարդը, իրոք, հպարտանալու տեղ ունի. ավերված քաղաքի ավերված երկաթուղին մեջքը շտկել է նաև ի՛ր աշխատանքով, իր պատասխանատվության ու նվիրումի շնորհիվ, ինքն այդ ամենի կենտրոնում է եղել: Կայարանապետն ուրախ է իր հարազատ քաղաքի համար, երկաթուղու համար, որին նվիրաբերել է իր ողջ կյանքը: Լսում էի նրան ու մտածում՝ մարդ վերցնի ու Նորիկ Պետրոսյանին հարցնի՝ ջահել-ջահել, էդ դժվարին վիճակներից ո՞նց գլուխ հանեցիք: «Պատմեք,-ասացի,-պատմեք, թե ինչը Ձեզ պահեց երկաթուղում»: Լուռ ժպտաց: Համեստ մարդկանց լռությունն էլ խոսք է: Էսպիսի մարդկանց ասելիքը հայացքում փնտրեք, կարդացեք աչքերի մեջ՝ սիրում է երկաթուղին ու սիրով էլ աշխատել է. ահա պատասխանը:

Ինը ղեկավար է փոխել, որևէ մեկը չի ասել՝ աչքիդ վերևը հոնք կա: Տեղիք չի տվել դիտողության, թույլ չի տվել որևէ լուրջ վրիպում: Գնահատել են, խրախուսել, պարգևատրել: Ժողովուրդների բարեկամության շքանշան է ստացել, պատվոգրեր ու շնորհակալագրեր: Հարավկովկասյան երկաթուղու երբեմնի տնօրեն Շայդուլինի կողմից անվանական ժամացույց պարգև ստանալն էլ պակաս պատվաբեր չէ:

Երկու զավակների հայր է Նորիկ Պետրոսյանը: Նարեկ որդին ապագա երկաթուղային է, այժմ ուսանում է Ռոստովի երկաթուղային ինստիտուտում: Դուստրը՝ Լուսինեն, մանկավարժ է, հանրակրթական դպրոցի փոխտնօրեն: Երկու մանկահասակ թոռնիկների համար կայարանը սիրված վայր է. գնացքների սուլոց, շոգեքարշերի մանևրներ՝ խենթանում են: Ինչպես ժամանակին պապը նրանց տարիքում:

Այս տարի Նորիկ Պետրոսյանի համար հոբելյանական է՝ նա դարձել է 55 տարեկան: Ասենք՝ շնորհավոր: Կշարունակի աշխատել որքան հարկն է, որքան կներեն ուժերը: Իսկ թե կենսաթոշակի անցնի, հողագործությունը կա ու կա: Ժպիտով խոստովանում է՝ ուշքումիտքս էլի երկաթուղին կլինի:

■

Սուսաննա Մարտիրոսյան

ПОЗДРАВЛЯЕМ НАШИХ ЮБИЛЯРОВ

1 января Аладжян Акоп Петросович, начальник команды Службы безопасности
1 января Егикян Норик Рубенович, дорожный мастер Гюмрийской дистанции пути
1 января Манукян Гамлет Арутюнович, монтер пути Ереванской дистанции пути
1 января Оганисян Алик Мясникович, мастер Гюмрийского локомотивного депо
1 января Оганесян Цогик Андраниковна, билетный кассир ст. "Армавир" Дирекции пассажирских перевозок
1 января Паремузян Григор Варданович, электромеханик Предприятия электрификации и энергоснабжения
1 января Погосян Спартак Гургенович, заведующий складом Дирекции материально-технологического обеспечения
1 января Тамазян Давид Размикович, дежурный по станции "Алаверди" ЛСО Ванадзор
1 января Хачатрян Армен Володяевич, билетный кассир электропоездов Дирекции пассажирских перевозок
1 января Шахпазян Ашот Сережаевич, такелажник Восстановительных и противопожарных поездов
2 января Гаспарян Агарон Арамаисович, монтер пути Гюмрийской дистанции пути
2 января Саргсян Гегам Ванушевич, монтер пути Ереванской дистанции пути
3 января Киракосян Гегам Эдуардович, инженер 1-ой категории Предприятия электрификации и энергоснабжения
3 января Микаелян Овик Айказович, монтер пути ПМС Масис
3 января Погосян Гагик Грачикович, начальник тов. конторы ст. "Зод" ЛСО Севан
4 января Арутюнян Сережа Вараздатович, монтер пути Гюмрийской дистанции пути
4 января Восканян Ашот Парсаевич, машинист эл-воза Гюмрийского локомотивного депо
5 января Антонян Тамара Араратовна, дежурный по станции ЛСО Ереван
5 января Ерзнкян Армен Сережаевич, оператор котельной Дирекции материально-технологического обеспечения
5 января Хуршудян Нвер Левонович, зам. начальника вагонного депо "Гюмри" по эксплуатации Гюмрийского вагонного депо
6 января Оганесян Дереник Степанович, дежурный по ст. "Чаренцаван" ЛСО Севан
7 января Амроян Тагуш Сережаевна, диспетчер по регул. вагонного парка Дирекции по перевозкам
7 января Варданян Барегам Шаваршевич, приемо-сдатчик грузов ЛСО Ереван
8 января Торосян Карине Бабкеновна, дежурная д/о локомот. бригад ст. Ереван Гюмрийского локомотивного депо (завед.)
10 января Казарян Мушег Максимович, маляр 5-го разряда-штукатурщик Дирекции материально-технологического обеспечения
11 января Аветисян Геворг Шаликоевич, дежурный электромеханик Предприятия электрификации и энергоснабжения
15 января Минасян Андраник Гарегинович, зам. начальника станции по операт. и грузовой работе
16 января Атанесян Асмик Врежевна, бухгалтер 1-ой категории Гюмрийского локомотивного депо
18 января Сардарян Сасун Самвелович, электромеханик Предприятия электрификации и энергоснабжения
19 января Малхасян Ваник Аршавирович, дежурный по переезду Ереванской дистанции пути
20 января Марукян Вреж Аршавирович, монтер пути Ванадзорской дистанции пути
21 января Галстян Самвел Егиазарович, монтер пути Ереванской дистанции пути
21 января Аладжян Акоп Петросович, начальник команды Служба безопасности
22 января Мирзоян Александр Иванович, слесарь по рем. КИП Гюмрийского локомотивного депо
28 января Степанян Симон Ашикович, монтер пути Ереванской дистанции пути
29 января Шахбазян Ерванд Левонович, машинист Восстановительных и противопожарных поездов
31 января Коналян Акоп Дживанович, электрогазосварщик 5-го разряда Дирекции материально-технологического обеспечения

Հայաստանի ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ
ЮКЖД
ՀԿԵ ՓԲԸ-ի կորպորատիվ ամսաթերթ

Խմբագրական խորհուրդ
Համարի պատասխանատու՝ **Վարդան Ալոյան**
Լուսանկարները՝ **Հարություն Նազարյանի**
Սրբագրիչ՝ **Մանուշ Բաբայան**

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, Երևան, Տիգրան Մեծի պող. 50
Հեռ.՝ **(010) 57-50-02**
Էլ. փոստ՝
pr@railway.am,
ukzhdpressoffice@inbox.ru

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ
Տպաքանակը՝ 800 օրինակ
Ստորագրված է տպագրության՝ 29.12.2015 թ.
Տպագրված է «Լիոն Փրինթինգ Սերվիս» ՍՊԸ տպարանում